ՏԵՂԵԿԱՆՔ

<<16>> <<հոկտեմբերի>> 2019թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժնի պետի (ծածկագիր՝ 18/1-2.2-3) ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու համար դիմում են ներկայացրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ Լևոն Երջանիկի Աբրահամյանը, Արմեն Աղասու Տոնոյանը և Հովհաննես Լադիկի Միկողոսյանը:

ՀՀ կառավարության 10.07.2018թ. N 792-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի համաձայն ս.թ. հոկտեմբերի 15-ին Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի մոտ, մասնակցությամբ՝ Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնակատար Ռուզաննա Հարությունյանի, Ջրային կոմիտեի քարտուղարության պետի պարտականությունները կատարող Լիանա Հունանյանի անցկացվել է հարցազրույց:

Իրականացված հարցազրույցի ընթացքում պարզվել է, որ՝

1. քաղաքացի Լևոն Երջանիկի Աբրահամյանը ունի սերժանտի զինվորական կոչում և չունի աշխատանքային փորձ տվյալ բնագավառում:
2. քաղաքացի Արմեն Աղասու Տոնոյանը ունի սերժանտի զինվորական կոչում, իսկ աշխատանքային ստաժը տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին չի համապատասխանում:
3. քաղաքացի Հովհաննես Լադիկի Միկողոսյանը ունի զինվորական կապիտանի կոչում, մասնակցել է սահմանամերձ դիրքերի պաշտպանությանը, եղել է վաշտի հրամանատար: Ունի տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին համապատասխան աշխատանքային ստաժ:

Քննարկման արդյունքում որոշվեց թեկնածուներից հավանություն տալ՝ քաղաքացի Հովհաննես Լադիկի Միկողոսյանին: Քաղաքացի Հովհաննես Լադիկի Միկողոսյանի հետ կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Հաստատեց՝
Ջրային կոմիտեի գլխավոր
քարտուղարի պաշտոնակատար

Ս.Զատիկյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Կազմեց՝ Ջրային կոմիտեի քարտուղարության
պետի պարտականությունները կատարող՝
Լ.Հունանյան

Մասնակից՝ Ջրային կոմիտեի գլխավոր
քարտուղարի տեղակալի պաշտոնակատար
Ռ.Հարությունյան